Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 57 - Ա
որոշման

«ՄԱՐԶԱԴԱՇՏԻ, ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս և հարակից քաղաքների բնակիչների առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության պահպանման և զարգացման նպատակով նախատեսվում է Գորիսի համայնքապետարանին պատկանող «Հաղթանակ» այգու տարածքում գտնվող մարզադաշտի, մարզահրապարակի և մանկական խաղահրապարակի լուսավորության և մուտքի բարեկարգման աշխատանքների իրականացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաք, բնագավառը՝ սպորտ
6.	Ծրագրի բյուջեն	9,495,400 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գորիս համայնքը և համայնքի բնակիչները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի փետրվարի 28-ից մինչև 2025 թվականի հուլիսի 28-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի «Հաղթանակ» այգու տարածքում գտնվող մարզադաշտի, մարզահրապարակի և մանկական խաղահրապարակի համար նախատեսվում է կատարել ընդհանուր լուսավորության և մուտքի բարեկարգման աշխատանքներ: Կկատարվեն հողի հարթեցման, բետոնե սալիկների և եզրաքարերի տեղադրման, լուսավորության հենասյուների, արևային լուսատուների տեղադրման և մոնտաժման, մետաղական սյուների և ցանցով շրջանակների տեղադրման աշխատանքներ: Իրականացվելու է 2025 թվականի փետրվարի 28-ից մինչև 2025 թվականի հուլիսի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ 9,495,400 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի «Հաղթանակ» այգու տարածքում գտնվող մարզադաշտի, մարզահրապարակի և մանկական խաղահրապարակի ընդհանուր լուսավորության և մուտքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 9,495,400 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ